

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԴԻՎԵՐՍԻՖԻԿԱՑՄԱՆ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՆԵՐՈՒԺԸ ԳԻՏԵԼԻՔԻ ԵՎ ԻՆՈՎԱՑԻԱՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ՍՎԵՏԼԱՆԱ ԱՐԿԱԴԻԻ ԴԱԼԼԱՔՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու

ՍԱՐԳԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ՍԱՐԳՍՅԱՆ

«ԱԿԲԱ Լիզինգ» ՎԿ ՓԲԸ փոխտնօրեն

Հոդվածը ստացվել է՝ 03.02.2021, գրախոսվել է՝ 01.04.2021

Ներածություն

Դիվերսիֆիկացված տարածաշրջանային տնտեսությունն իրենից ներկայացնում է բազմակողմանի զարգացած, տնտեսական ճգնաժամերի նկատմամբ հարաբերականորեն կայուն բազմաձյուղ տնտեսություն: Այսօր, երբ ողջ աշխարհը համավարակի պատճառով հայտնվել է տնտեսական ճգնաժամի մեջ, իսկ Հայաստանը, բացի համավարակի բացասական հետևանքներից, վերապրել է նաև պատերազմ, ավելի քան երբևէ պետք է կարևորել տնտեսության դիվերսիֆիկացման հնարավորությունների բացահայտումը և դրա իրագործման ուղղությամբ անհրաժեշտ քայլերի կազմակերպումը: Մինևույն ժամանակ հասկանալի է, որ տարածաշրջանային տնտեսության դիվերսիֆիկացիան բավականին բարդ երկարաժամկետ գործընթաց է, որի իրականացման համար պահանջվում են ռեսուրսային զգալի հնարավորություններ և ծավալներ: Հետևաբար ծագում են խնդիրներ՝ կապված տնտեսական նպատակահարմարության, ուղղությունների սահմանման և յուրաքանչյուր տարածաշրջանային տնտեսության դիվերսիֆիկացիայի հետևանքների գնահատման հետ: Ներկայումս դիվերսիֆիկացումը պետական քաղաքականության մոտեցում է, որը նպատակ ունի հաղթահարել երկրի կամ տարածաշրջանի տնտեսության կախվածությունը տնտեսական գործունեության նեղ շրջանակից, և ուղղված է արտադրության ավելի հավասարակշռված կառուցվածքի ստեղծմանը եկամտի հնարավոր աղբյուրների, զբաղվածության, ինչպես նաև ցիկլային և շուկայական ռիսկերի տեսանկյունից: Քանի որ Հայաստանը չունի բնական ռեսուրսներ, ծով դեպի արտաքին աշխարհ, նույնիսկ ցամաքային այլընտրանքային ճանապարհներ, ուստի ՀՀ-ի համար ամենամեծ հետաքրքրություն առաջացնում են տնտեսության կառուցվածքային տրանսֆորմացման այն ուղղությունները, որոնք կապված են ինովացիոն զարգացման հետ, այսինքն՝ *գիտելիքների և ինովացիաների վրա հիմնված ճյուղերի և արտադրությունների աճի հետ:*

Մեր հետազոտության նպատակն է ներկայացնել ՀՀ տնտեսության դիվերսիֆիկացման հնարավորությունները և ներուժը՝ շեշտադրելով գիտելիքահենք և ինովացիոն տնտեսության անհրաժեշտությունը:

Տնտեսության դիվերսիֆիկացումը տնտեսական զարգացման գործընթացներին աջակցելու ամենաարդյունավետ ուղղություններից մեկն է: Տարատեսակ

աղբյուրների հաշվին երկրների եկամուտների ձևավորումը արտացոլող դիվերսիֆիկացման քաղաքականությունը լայն հնարավորություններ է ընձեռում տնտեսության զարգացման արդյունավետության և շահութաբերության տեսանկյունից: Այս համատեքստում պետք է փաստել, որ Մինգապուրը, չունենալով բնական ռեսուրսներ և շատ հողատարածքներ, համարվում է ժամանակակից արդյունաբերական կենտրոններից մեկը, որն ունի դիվերսիֆիկացված տնտեսություն, և ձեռնարկությունների միջև առևտուրը շարունակում է իր դերն ունենալ իր տնտեսության զարգացման մեջ¹: Դիվերսիֆիկացիան ազդում է արտադրության բացարձակապես բոլոր գործոնների և պայմանների վրա (աշխատուժ, մատակարարներ, միջնորդներ, վաճառքի ուղիներ), ինչը մրցակցային պայքարի պայմաններում թույլ է տալիս խուսափել ձեռնարկության գործունեության կենսական նշանակության ոլորտների մոնոպոլացումից՝ դարձնելով ավելի կայուն և արդյունավետ²: Կարելի է պնդել, որ ներկա ժամանակաշրջանում տնտեսության դիվերսիֆիկացիան ձեռք է բերում ավելի մեծ արդիականություն և դառնում է Հայաստանի տնտեսության զարգացման գերակա ուղղություններից մեկը:

Գրականության ակնարկ

Հետազոտությունն ավելի հիմնավորված դարձնելու համար առանձնացնենք մի քանի գիտատեսական կոնցեպտներ, որոնք ներկայացնում և բացատրում են ազգային և տարածաշրջանային մակարդակներում տնտեսական զարգացման և արտադրական կառուցվածքի դիվերսիֆիկացիայի միջև փոխհարաբերությունների բնույթը:

Էվոյուցիոն տնտեսություն, որտեղ ուշադրությունը կենտրոնացվում է անցյալից կառուցվածքային տրանսֆորմացիաների ուղղությունների և արագության վրա: Զարգացման անցած ուղուց կախվածության բեռը անհամամասնորեն ծանրաբեռնում է տարածաշրջաններն ու երկրները. որոշ կուտակված իրազեկություններ (կոմպլեքսներ) կարևոր են միայն որոշակի տեսակի արտադրանքի կամ ապրանքների խմբերի համար (օրինակ՝ հատուկ տեխնիկական գիտելիքներ), իսկ մյուսները կարևոր են ցանկացած գործունեության համար: Որպես նման համընդհանուր իրազեկություններ հաճախ դիտարկվում են, օրինակ, ինովացիոն և հարմարվողական ունակությունները, սոցիալական կապիտալը, պետական կառավարման որակը և այլն: Սակայն մինչ այժմ ոչ շատ հետազոտություններում ձեռնարկվում են փորձեր՝ վերլուծելու, թե ինչպես են տեղի ունենում տարածաշրջանային տնտեսության կառուցվածքի փոփոխությունները (դիվերսիֆիկացիա/ մասնագիտացում): Կան հետազոտություններ, որոնք ցույց են տալիս, որ արտադրական և տեխնոլոգիական դիվերսիֆիկացման մեջ

¹ Սարգսյան Լ., Գրիգորյան Դ., «Տնտեսական հրաշքերը». գործարկման ուղիները Հայաստանում (Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում- հատոր 1), գիտաժողովի նյութեր/ գիտ. խմբագիր՝ Վ. Լ. Հարությունյան, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2020, էջ 177:

² Чарочкина Е. Ю., Каширцева А. Ю., Диверсификация промышленного комплекса региона (на материале Курской области) // Известия Юго-Западного государственного университета. 2014.

կարևոր դեր են խաղում արդեն գոյություն ունեցող ֆիրմաները և ճյուղերը, և որ հաջողություն կունենա կապակցված դիվերսիֆիկացիան¹:

Եվրոպացի շատ հետազոտողներ^{2,3} կիսում են «կապակցված դիվերսիֆիկացիայի» հաշվին տարածաշրջանային զարգացումը խթանելու գաղափարները, այսինքն՝ արդեն կուտակված ակտիվների, գիտելիքների և հմտությունների վրա հիմնված բազմազանության աճը: Ներկայումս Եվրամիությունը հայտարարել է «խելացի մասնագիտացման» (Smart Specialization) քաղաքականությունը որպես գերակայություն, որը ենթադրում է տարածաշրջանների մրցակցային առավելությունների ամրապնդում տեխնոլոգիաների համեմատաբար նեղ հատվածում բարձր տեխնոլոգիական ձեռնարկատիրության խթանման հաշվին: Մասնագիտացման առավելությունները, որպես տարածաշրջանային տնտեսության աճի ուղղություն, ներկայացվում և մեկնաբանվում են մի շարք աշխատություններում⁴:

Կառուցվածքային փոփոխությունների գործընթացների վրա ինստիտուտների ազդեցության ուսումնասիրության մեջ ներառված նշանակալից հասկացություններից *մեկը կապիտալիզմի բազմազանության տեսությունն է*: Առիթի բերումով նկատենք, որ շուրջ մեկ դար առաջ գերմանացի հայտնի տնտեսագետ Վ. Ջոնֆարտը ապագա հասարակության համար գծում էր տնտեսական ու սոցիալական բազմաթիվ բաղադրիչներից բաղկացած բարդ պլյուրալիստական համակարգ՝ նկատելով, թե «սխալվում են բոլոր նրանք, ովքեր կանխագուշակում են, որ ապագայում պետք է իշխի մեկ տնտեսական համակարգ: Կարելի է հաստատել, որ պատմության ընթացքում զուգահեռաբար գոյություն ունեցող տնտեսագետների թիվը ավելի ու ավելի է մեծանում»⁵:

Ձարգացած երկրներում ձևավորվել են ազգային տնտեսության կազմակերպման մի քանի տարբերակներ՝ լիբերալ շուկայական և համակարգվող շուկայական տնտեսություններ⁶: Համակարգված շուկայական տնտեսություններն ավելի նպաստավոր են աստիճանական ինովացիաներին. աշխատողներն ավելի պաշտպանված են աշխատանքը կորցնելուց և կարող են հասնել ավելի բարձր մակարդակի, որը հատուկ է գոյություն ունեցող տեխնիկական հմտություններով ճյուղերին: Սակայն լիբերալ շուկայական տնտեսությունն ավելի շատ աջակցում է «արմատական» ինովացիաներին. ֆիրմաները առավել շարժական շուկաներում կարող են հեշտությամբ գտնել անհրաժեշտ հմտություններով աշ-

¹ Neffke, F., Henning, M. and Boschma, R. (2011). How do regions diversify over time? Industry relatedness and the development of new growth paths in regions. *Economic Geography*, 87(3), 237–265.

² Asheim, B. T., Boschma, R. and Cooke, P. (2011). Constructing regional advantage: Platform policies based on related variety and differentiated knowledge bases. *Regional studies*, 45(7), 893–904.

³ Frenken, K., Van Oort, F.G., Verburg, T. (2007). Related variety, unrelated variety and regional economic growth. *Regional Studies*, 41(5), 685–697.

⁴ Fagerberg, J. and Srholec, M. (2016). Explaining regional economic performance: the role of competitiveness, specialization and capabilities. *Papers in Innovation Studies, CIRCLE. WP*, 2, 29 p.

⁵ Սարինյան Ռ., Տնտեսագիտական ուսմունքի պատմություն, Եր., 2004, էջ 85:

⁶ Hall, P.A., Soskice, D. (eds.): *Varieties of Capitalism. The Institutional Foundations of Comparative Advantage*. Oxford: Oxford University Press, 2001. An Introduction.

խատողների, ձեռք բերել նոր տեխնոլոգիաներ ունեցող ընկերություններ, հասանելիություն ունենալ ֆինանսական ռեսուրսներին, որոնք անհրաժեշտ են ավելի ռիսկային նախագծեր իրականացնելու համար: Ռ. Բոշմայի և Ջ. Կապոնեի հետազոտությունները (Boschma and Capone, 2015) ապացուցում են, որ ոչ կապակցված դիվերսիֆիկացիայի զարգացման հավանականությունը առավել մեծ է ազատ շուկայական տնտեսություն ունեցող երկրներում, ընդ որում՝ կապակցված դիվերսիֆիկացիան ավելի մեծ է այն երկրներում, որտեղ ինստիտուտները ավելի շատ աջակցում են աշխատաշուկային, կորպորատիվ կառավարմանը և միջֆիրմային փոխգործողություններին: Այսպիսով՝ ինստիտուցիոնալ միջավայրը նշանակալից կերպով կարգավորում և կանխորոշում է երկրի տնտեսական և տեխնոլոգիական մասնագիտացումը¹: Հարկ է նշել նաև, որ Մ. Ֆելդմանի և Դ. Աուդրետշի (Feldman and Audretsch, 1999) դասական աշխատությունում հիմնավորվում են տնտեսական աճին նպաստող ինովացիաների և տեխնոլոգիական փոփոխությունների համար որպես կատալիզատոր հանդես եկող դիվերսիֆիկացիայի առավելությունները²: Դիվերսիֆիկացման գործոնների վերաբերյալ հայտնի գիտական պատկերացումները նշանակալից կերպով կապված են ինովացիոն գործունեության հետ: Ըստ Մ. Ն. Ռասսվորցևայի³ «զարգացման նախորդ հետազոտից հեռանալ հնարավոր է միայն տեխնոլոգիական ինովացիաների միջոցով, որոնք պատասխանատու են նորարարական տնտեսության առաջացման համար»: Ի. Վ. Գրեբենկինի աշխատությունը նվիրված է տնտեսության ինովացիոն ակտիվության վրա դիվերսիֆիկացիայի աստիճանի ազդեցության ուսումնասիրությանը, ձևակերպված են եզրահանգումներ ինովացիոն արտադրության վրա դիվերսիֆիկացիայի դրական ազդեցության վերաբերյալ⁴:

Հետազոտության տեսամեթոդական հիմքերը

Սույն հետազոտության համար մեթոդաբանական հիմք են ծառայել համընդհանուր գիտական մեթոդներ՝ տրամաբանական, համակարգային մոտեցման, համեմատական վերլուծության, գրաֆիկական, քանակական և այլ մեթոդներ, որոնք հնարավորություն են տալիս գիտելիքահենք և ինովացիոն տնտեսությունը բնութագրող ցուցանիշները և համաթվերը դիտարկել դինամիկայի մեջ, բացահայտել առաջացած հակասությունները և բնորոշ առանձնահատկությունները: Քանակական գնահատման համար լայնորեն կիրառվել են ինովացիոն տնտեսությունը գնահատող համաթվեր և գործակիցներ:

Նախանշված հետազոտական նպատակի իրագործման համար հիմք են

¹ Boschma, R. and Capone, G. (2015). Institutions and diversification: Related versus unrelated diversification in a varieties of capitalism framework. *Research Policy*, 44, 1902–1914.

² Feldman, M. and Audretsch, D. (1999). Innovation in Cities: Science-Based Diversity, Specialization and Localized Competition. *European Economic Review*, 43(2), 409–429.

³ Растворцева С. Н., Теоретические аспекты возможности ухода экономики региона от траектории предшествующего развития // *Журнал экономической теории*, 2018, т. 15, № 4, с. 633–642.

⁴ Гребенкин И. В., Влияние уровня диверсификации на инновационную активность в обрабатывающей промышленности, *Экономика региона*, 2018, т. 14, вып. 2, с. 600–611.

հանդիսացել հայրենական և արտասահմանյան հեղինակների աշխատանքները և գիտական հոդվածները: Իսկ տեղեկատվական հիմք են հանդիսացել Համաշխարհային բանկի, Արժույթի միջազգային հիմնադրամի և այլ կառույցների պաշտոնական նյութերը: Տեսական վերլուծությունների ընթացքում հատուկ ուշադրություն է դարձվել տեսությունների տնտեսագիտական ու մեթոդաբանական առավելություններին և թերություններին:

Հիմնական վերլուծություն

Համաշխարհային տնտեսության զարգացման ժամանակակից փուլը բնութագրվում է նրանով, որ շատ երկրներ, անշուշտ հաջողության տարբեր աստիճաններով, փորձում են հետևել առաջատար երկրների օրինակին և իրենց զարգացման մեջ գլխավոր շեշտը դնել մարդկային ռեսուրսների վրա՝ ստեղծելով ինովացիոն տնտեսություն, այն է՝ գիտելիքի վրա հիմնված տնտեսություն: «Գիտելիքի տնտեսություն» եզրույթի տարածումը վերագրվում է Փ. Դրաքերին, որը համարում է, որ գիտելիքի տնտեսությունը վերաբերում է գիտելիքի օգտագործմանը՝ տնտեսական օգուտներ քաղելու համար: Գիտելիքահենք տնտեսության շարժիչ ուժերի հետ կապված ևս կան մի շարք կարծիքներ: Ըստ Ջ. Հաֆթոնի և Փ. Շիհեաի՝ գիտելիքահենք տնտեսությունն առաջանում է առանձնահատուկ երկու ուժերից՝ տնտեսական գործունեության մեջ գիտելիքի ինտենսիվության մեծացումից և տնտեսական հարաբերությունների գլոբալացումից¹: Ըստ Գ. Վարդանյանի՝ բոլոր ժամանակներում էլ գիտելիքը կարևորվել է տնտեսական աճի և զարգացման տեսանկյունից, սակայն ներկայումս արագ աճող տնտեսություններն էլ ավելի են կախված գիտելիքի ստեղծումից, ձեռքբերումից և տարածումից, և դրանցում աշխատուժի գիտելիքները, հմտությունները, փորձը և նորարարության ներուժն ավելի մեծ արժեքներ են ներկայացնում, քան արտադրության հիմնական միջոցները²: Ներկայացվածին ի հավելումն նշենք, որ արդյունաբերական տնտեսության մեջ մրցակցային առավելության հիմք են էժան հումք ձեռք բերելու հնարավորությունը, էժան աշխատուժը և այլն (Ճապոնիան պատերազմից հետո, Հարավային Կորեան), սակայն գիտելիքների վրա հիմնված տնտեսության մեջ մրցակցային առավելության հիմք են նոր գիտելիքների ձեռքբերման և ինովացիաների ներդրման արագությունը, վենչուրային ռազմավարությունը և այլն: Հայաստանի համար այսօրվա պայմաններում՝ համավարակի առկայության և հետպատերազմական իրավիճակում, ավելի քան անհրաժեշտ է ունենալ գիտելիքահենք և ինովացիոն տնտեսություն, հակառակ դեպքում հաջորդ տարիների ընթացքում կարող ենք բախվել կործանարար խնդիրների: Ինովացիոն տնտեսության քաղաքականությունը կարևորագույն դեր ունի զարգացող տնտեսություն ունեցող երկրներում, ինչպես նաև շուկա ձևավորող երկրներում,

¹ A Primer on the Knowledge Economy. Prepared by John Houghton and Peter Sheehan. CSES working Paper No.18, February 2000.

² Վարդանյան Գ. Ի., Գիտելիքահենք տնտեսություն. հնարավորություններ և մարտահրավերներ, Եր., «Գիտություն» հրատ., 2008, 402 էջ, էջ 13:

որտեղ նորարարությունն ունի հսկայական ազդեցություն ռազմավարությունների և պլանների մշակման գործընթացում, ինչպես նաև հանդիսանում է որոշիչ գործոն այնպիսի սոցիալական խնդիրների լուծման համար, ինչպիսիք են՝ առողջապահությունը, աղքատությունը և գործազրկությունը¹:

Գիտելիքահենք և ինովացիոն տնտեսությունում գիտելիքի և ինովացիաների ներուժի գնահատման, ինչպես նաև առկա իրավիճակի վերաբերյալ վերլուծություններ կատարելու համար օգտագործվում են տարբեր համաթվեր և ցուցանիշներ՝ GII-BCG, ICI, EU Innovation Index և GII INSEAD (Համաշխարհային նորարարության համաթիվ- ՀՆՀ), GCI-ի (Համաշխարհային մրցունակության համաթիվ-ՀՄՀ) 12-րդ ենթահամաթիվը՝ նորարարության կարողություններ, KEI (գիտելիքի տնտեսության համաթիվ) և GKI (Համաշխարհային գիտելիքի համաթիվ-ՀԳՀ) և այլ ցուցանիշներ: Անհրաժեշտ է նշել, որ ներկա պայմաններում սրանցից որոշները չեն հաշվարկվում՝ GII ICI, իսկ KEI-ը վերջին անգամ հաշվարկվել է 2012 թվականին, և վերջինս վերլուծել նպատակահարմար չէ: Հետևաբար մեր հետազոտության համար որպես գիտելիքի և ինովացիաների ներուժի գնահատման ցուցանիշներ կվերցնենք ՀԳՀ, ՀՆՀ և ՀՄՀ-ի 12-րդ ենթահամաթիվը՝ ինովացիաների կարողությունը (innovation capability):

Համաշխարհային գիտելիքի համաթիվը (ՀԳՀ) սկսել է հաշվարկվել 2017 թվականից. այն ամփոփ ցուցանիշ է 7 ոլորտներում գիտելիքի կատարողականին հետևելու համար.

1. մինչհամալսարանական կրթություն,
2. տեխնիկական և մասնագիտական կրթություն և թրեյնինգներ,
3. բարձրագույն կրթություն,
4. հետազոտություն, զարգացում և նորարարություն,
5. տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաներ,
6. տնտեսություն,
7. ընդհանուր բարենպաստ միջավայր:

ՀԳՀ-ն նպատակ ունի չափել գիտելիքի բազմաբնույթ հասկացությունը: Վերջինս հաճախ կապված է հարակից հասկացությունների հետ, ինչպիսիք են «գիտելիքի տնտեսությունը» կամ «գիտելիքների հասարակությունը»: ՀԳՀ-ն միտված է ներդնել գիտելիքի ավելի համակարգված ընկալում՝ գաղափարը բաժանելով դրա բաղկացուցիչ մասերի և ներկայացնելով «գիտելիքներ» հասկացության բազմաչափ բնույթը բոլոր համատեքստերում և կիրառական ծրագրերում, որոնք վերաբերում են տնտեսական և սոցիալական կառուցվածքներին: Այս համաթիվը թույլ է տալիս ավելի իմաստալից և խորաթափանց ուսումնասիրել գիտելիքների քաղաքականությունը տարբեր ոլորտների վերաբերյալ: Բացի այդ, այն նաև հնարավորություն է տալիս ավելի գիտական և հիմնավորված կապ ստեղծել ու ներկայացնել տնտեսության զարգացման և գիտելիքների միջև:

¹ Ваганян Г., Ваганян О., Россия: тенденции и перспективы развития. Ежегодник. Вып. 12. Ч. 1 / РАН. ИНИОН. Отд. науч. сотрудничества; Отв. ред. В. И. Герасимов. М., 2017, стр 534.

Ներկայացնենք Հայաստանի համար ՀԳՀ կառուցվածքը և դիրքը 2017-2020 թվականներին (տե՛ս աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Հայաստանի համաշխարհային գիտելիքի համաթիվը իր կառուցվածքային 7 ցուցանիշներով 2017-2020 թթ. կտրվածքով¹

| | 2017 | 2018 | 2019 | 2020 |
|-----------------------------------------------------------------|-------------------------------|-------------------------------|-------------------------------|-------------------------------|
| № | Դիրքը 131 երկրների մեջ | Դիրքը 134 երկրների մեջ | Դիրքը 136 երկրների մեջ | Դիրքը 138 երկրների մեջ |
| Ցուցանիշի անվանումը | | | | |
| ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԳԻՏԵԼԻՔԻ ՀԱՄԱԹԻՎ (ՀԳՀ, GKI) | 76 | 85 | 79 | 84 |
| 1. Մինչհամալսարանական կրթություն | 35 | 79 | 74 | 87 |
| 2. Տեխնիկական, և արհեստագործական կրթություն ու ուսուցում | 126 | 129 | 122 | 121 |
| 3. Բարձրագույն կրթություն, | 83 | 81 | 95 | 100 |
| 4. Հետազոտություն, զարգացում և նորարարություն, | 68 | 74 | 66 | 76 |
| 5. Տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաներ | 70 | 72 | 73 | 69 |
| 6. Տնտեսություն | 76 | 73 | 66 | 68 |
| 7. Ընդհանուր բարենպաստ միջավայր | 79 | 76 | 73 | 68 |

Հարկ ենք համարում նշել, որ ՀԳՀ-ով Հայաստանը գտնվում է ոչ ցանկալի դիրքերում, ինչը մտահոգվելու տեղիք է տալիս: Համեմատության համար նշենք, որ հետ ենք մնում հարևան երկրներից. 2020 թ. Ադրբեջանի ԳՀ-ն կազմել է 64, Թուրքիայինը՝ 69, Վրաստանինը՝ 63: ԵԱՏՄ երկրների շրջանակներում բոլոր երկրներին ևս զիջում ենք, բացի Դրոգուսանից՝ 94: Աղյուսակ 1-ը վերլուծելով՝ կարող ենք փաստել, որ ՀԳՀ-ի կառուցվածքային տարրերից ամենավատ դիրքերում են գտնվում կրթությունը բնութագրող ցուցիչները (1, 2, 3): Հայաստանի այսօրվա կրթական համակարգը չի համապատասխանում երկրի երկարատև և կայուն զարգացման պահանջներին, և կրթական համակարգը բնութագրող ցուցիչների այդքան ցածր լինելը ունի բազմաթիվ օբյեկտիվ պատճառներ, սակայն դրանք այս հետազոտության շրջանակներում չենք վերլուծի:

Նորամուծական տնտեսությունը հաճախ բնութագրվում է նաև մի շարք համաշխարհային համաթվերով՝ ՀՆՀ-ով և ՀՄՀ-ով: Նորարարությունը գոյատևման նախապայման է և հետևաբար առանցքային գործոն տնտեսական աճի համար: Նորամուծությունը գործընթաց է, որը սկսվում է գիտական հետազոտությունից և ավարտվում նորարարության իրացմամբ՝ գիտական նորույթի առևտրայնացմամբ, որն ամենակարևորն է, քանի որ վերջինիս շնորհիվ է ապահովվում երկրի մրցունակության բարձրացում և ի վերջո տնտեսական ազդեցացում և աճ: Նո-

¹ Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից հիմաք ընդունելով <https://knowledge4all.com/en/Ranking> կայքը և Global knowledge index 2020, Achim Steiner United Nations Development Programme (UNDP), p.30

րամուծական կարողության մեծությունը պարամետր է, որ թույլ է տալիս տարածաշրջանը գնահատել իր նորարարական գործունեության հնարավորությունների մեջ և որոշել նորարարական զարգացման ռազմավարությունը: Նորարարությունը համալիր խնդիրների համար լուծումներ որոնելու մշտական գործընթաց է, որը հիմնված է շարունակական ուսուցման և գիտելիքներ կուտակելու վրա: Հենց այս տրամաբանությամբ է կառուցված ՀՆՀ-ն, որը որպես ծախսերի և արդյունքի հարաբերակցություն հնարավորություն է տալիս օբյեկտիվորեն գնահատել այս կամ այն երկրում ինովացիայի զարգացմանն ուղղված ջանքերի արդյունավետությունը (տե՛ս աղյուսակ 2): Որքան ՀՆՀ-ում ներառված ցուցանիշի միավորը մոտենում է 100-ին, այնքան տվյալ ենթահինդեքսի և ցուցանիշի դիրքը բարելավվում է և հակառակը:

Աղյուսակ 2


Հայաստանի համաշխարհային նորարարական համաթիվը իր երկու ենթահամաթիվերով և ցուցանիշներով 2018-2020 թթ. կտրվածքով ¹

| № | Ցուցանիշի անվանումը | 2018 | | 2019 | | 2020 | |
|-----|------------------------------------------------------------------------------------------------------------|-----------------|----------------------------|-----------------|----------------------------|-----------------|----------------------------|
| | | Միավորը (0-100) | Դիրքը 126 երկրների շարքում | Միավորը (0-100) | Դիրքը 129 երկրների շարքում | Միավորը (0-100) | Դիրքը 131 երկրների շարքում |
| 1 | ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԹԻՎ (ՀՆՀ, GII) | 32.81 | 68 | 33.98 | 64 | 32.67 | 61 |
| 2 | <i>Ենթահամաթիվ 1. Ինովացիոն հետազոտության համար անհրաժեշտ ռեսուրսները և պայմանները (Innovation Input).</i> | 24.7 | 94 | 39.36 | 85 | 39.13 | 83 |
| 2.1 | • Ինստիտուտներ | 60.8 | 67 | 63.2 | 64 | 64.3 | 64 |
| 2.2 | • Մարդկային կապիտալ և հետազոտություններ | 15.2 | 110 | 19.9 | 107 | 20.5 | 94 |
| 2.3 | Ենթակառուցվածքներ | 36.5 | 93 | 40.2 | 85 | 34.4 | 90 |
| 2.4 | • Շուկայի զարգացվածության աստիճան | 43.5 | 81 | 50.1 | 55 | 49.6 | 68 |
| 2.5 | • Գործարար միջավայրի զարգացվածության աստիճան | 26.1 | 88 | 26.3 | 89 | 24.6 | 69 |
| 3 | <i>Ենթահամաթիվ 2. Ինովացիաների իրականացումը և ձեռքբերված գործնական արդյունքը (Innovation Output)</i> | 34.1 | 50 | 26.80 | 50 | 27.15 | 47 |
| 3.1 | • Գիտելիքի և տեխնոլոգիայի արդյունքներ | 23.2 | 62 | 25.5 | 54 | 28.5 | 45 |
| 3.2 | • Ստեղծագործական արդյունքներ | 35.0 | 48 | 32.2 | 48 | 25.8 | 56 |

¹ Աղյուսակը կազմվել է հեղինակների կողմից՝ հիմք ընդունելով՝ Global innovation index 2018, Energizing the World with Innovation, 11th edition, p. 221, Global innovation index 2019, Energizing the World with Innovation, 12th edition, p. 221, Global innovation index 2020, Energizing the World with Innovation, 13th edition, p. 218.

Ինչպես նկատում ենք աղյուսակ 2-ից, ՀՆՀ-ն 2019 թվականից սկսած առկա է դիրքերի բարելավում՝ 2018 թ. զբաղեցրել է 68-րդ հորիզոնականը, 2019 և 2020 թթ.՝ համապատասխանաբար 64 և 60-րդ դիրքերը: Մա պատահական չէ, քանի որ դիրքերի բարելավում է նկատվել նաև 2-րդ (Innovation Input) և 3-րդ (Innovation Output) ենթահամաթվերում՝ համապատասխանաբար 85-ից 83 և 50-ից 45-րդ դիրքեր: Եվ անհրաժեշտ է նշել, որ առաջին ենթահամաթվի մեջ առկա 2.5 ցուցանիշի՝ գործարար միջավայրի զարգացվածության աստիճան, դիրքի կտրուկ փոփոխություն է նկատվել 2020 թ. 2019-ի համեմատ՝ 20 տեղով: Այս ցուցանիշի մեջ ներառված են այնպիսի ցուցիչներ, ինչպիսիք են՝ գիտելիքներով օժտված աշխատակիցներ (knowledge workers), նորարարական կապեր (innovation linkages), գիտելիքի կլանում (knowledge absorbtion), որոնց մասով ունեցել ենք դիրքերի բարելավում: Երկրորդ համաթվի մեջ 3.1 ցուցանիշը՝ գիտելիքի և տեխնոլոգիայի արդյունքներ, ևս ապահովել է դիրքի աճ՝ 54-ից 45: Այս ցուցանիշի կազմում ներառված են հետևյալ ցուցիչները՝ գիտելիքի ստեղծում (knowledge creation), գիտելիքի ազդեցություն (knowledge impact), գիտելիքի տարածում (knowledge diffusion), որոնց հետ կապված ապահովվել է դիրքերի բարելավում: Հարկ է նշել, որ առաջին ենթահամաթվի մեջ ներառված 2.2 ցուցանիշի՝ մարդկային կապիտալ և հետազոտություններ, դիրքը ամենավատն է, թեկուզև բարելավվել է նախորդ տարիների նկատմամբ (107-ից-94), բայց և այնպես շատ հեռու է՝ հասնելու մյուս ցուցանիշների մակարդակին: Անհրաժեշտ է փաստել, որ 2.2 ցուցանիշի մեջ են մտնում կրթություն (education), բարձրագույն կրթություն (tertiary education), գիտական հետազոտություններ և մշակումներ (research and development R&D) ցուցիչները, որոնք բավականին վատ դիրքերում են գտնվում, ինչի մասին էր վկայում նաև Համաշխարհային գիտելիքի համաթվի վերլուծությունը աղյուսակ 1-ում, որտեղ ևս կրթության մասով բոլոր ցուցանիշները գտնվում էին ոչ բարվոք դիրքերում: ՀՀ-ն ներկայումս ԵԱՏՄ անդամ է, և այդ միության անդամ երկրների հետ համագործակցությունում հնարավոր չէ առանց նորարարական առաջընթացի, ուստի կարևորում ենք ԵԱՏՄ երկրների դիրքերի ուսումնասիրություն ՀՆՀ-ի մասով: Հետաքրքրական է նաև ուսումնասիրել տարածաշրջանի երկրների ՀՆՀ-ի դիրքերը ուսումնասիրել: Գծապատկեր 1-ում կներկայացնենք ԵԱՏՄ և տարածաշրջանի երկրներն 2019-2020 թթ. դիրքերը:

Ինչպես նկատում ենք գծապատկեր 1-ից, 2020 թ. ԵԱՏՄ երկրների շրջանակներում Հայաստանի ՀՆՀ-ն իր դիրքով զիջում է միայն Ռուսաստանին, իսկ հարևան երկրների մեջ՝ միայն Թուրքիային: Մա ևս մեկ անգամ հավաստում է, որ ՀՀ-ն ունի մեծ ներուժ իր տնտեսությունը դիվերսիֆիկացնելու ինովացիաների համատեքստում և դառնալու տարածաշրջանի և ԵԱՏՄ երկրներում գիտելիքի և ինովացիաների ազդեցացման կենտրոն:



Գծապատկեր 1. ԵՄՏՄ և հարևան երկրների դիրքը համաշխարհային նորարարական համաթվի վարկանշավորման մեջ 2019-2020 թթ.

Ինչպես վերևում նշել ենք, ինովացիոն տնտեսությունում գիտելիքի և ինովացիաների ներուժի գնահատման համար իր ուրույն տեղն ունի Համաշխարհային մրցունակության համաթվի (ՀՄՀ)–ի 12–րդ ցուցանիշը՝ նորարարության կարողությունը: Նորամուծական կարողության մեծությունը պարամետր է, որ թույլ է տալիս տարածաշրջանը գնահատել իր նորարարական գործունեության հնարավորությունների մեջ և որոշել նորարարական զարգացման ռազմավարությունը: Հայաստանը ՀՄՀ-ով 2019 թ. զբաղեցրել է 69-րդ դիրքը, իսկ 2018 թ.՝ 70-րդ, սակայն «Ինովացիոն կատարողական» ենթահամաթվով՝ համապատասխանաբար 60-րդ և 62-րդ դիրքերը: Անհրաժեշտ է նշել, որ 2018 թվականից սկսած ՀՄՀ-ն սկսել է հաշվարկվել նոր մեթոդաբանությամբ, որը ներկայացված է «Համաշխարհային մրցունակության հաշվետվություն 2018» տարբերակում¹, որն այժմ կոչվում է ՀՄՀ 4.0: Ըստ նոր մեթոդաբանության՝ ներառված են նոր ցուցանիշներ, որոնք առավել դիպուկ են բնութագրում «Չորրորդ արդյունաբերական հեղափոխությունը» Մեզ համար առավել կարևոր 12-րդ ենթահամաթվի՝ ինովացիոն կատարողականը, նախկին տարբերակում ներառված էին 7 ցուցանիշ, իսկ ՀՄՀ 4.0-ում՝ 10 ցուցանիշ, որոնցից հարկ է նշել «Կլաստերների զարգացման պայմանները» բնութագրող ցուցանիշները:

Նորամուծական գործունեության իրականացման կարևորագույն ուղղություններից մեկը կլաստերների ձևավորումն է, որը տնտեսական և գիտատեխնիկական զարգացման ժամանակակից միտումների պայմաններում որոշակի հիմքեր է ապահովում նոր գաղափարների առևտրայնացման գործուն մեխանիզմների ստեղծման համար: ՀՀ-ն լիարժեք հնարավորություն ունի նաև արտահանման վրա հիմնված զարգացմանն անցնելու, և զուգահեռաբար ինովացիոն զարգացման ինստիտուտներ ներդնելու համար կառավարության առաջնահերթ

¹ Schwab K. The Global Competitiveness Report 2018. Available at: <http://www3.weforum.org/docs/GCR2018/05FullReport/TheGlobalCompetitivenessReport2018.pdf> (accessed 1.04.2021)., p 631-649

նպատակներից մեկը պետք է դառնա գոյություն ունեցող և պոտենցիալ զարգացման կլաստերների իդենտիֆիկացումը ինչպես արտահանման ներուժի, այնպես և ինովացիոն զարգացման հնարավորությունների տեսանկյունից¹: Եվ մի շարք վերլուծություններ փաստում են, որ Հայաստանում բացակայում է գիտություն-տնտեսություն կապը, որի հետևանքով էլ գեներացված նորարարական, գիտական, ինժեներական կարողությունները արդյունավետ կերպով չեն առևտրանացվում և մտնում տնտեսություն²: Ընդ որում՝ ինովացիոն գործունեության կազմակերպման կլաստերային ձևը հանգեցնում է ինովացիայի հատուկ տեսակի՝ «միասնական դիվերսիֆիկացված ինովացիոն արտադրանքի» ստեղծմանը: Այդպիսի ինովացիան հանդիսանում է տնտեսության իրական և ֆինանսական հատվածների կառավարող սուբյեկտների գործունեության արդյունք, ինչը թույլ է տալիս արագացնել դրանց տարածումը ընդհանուր տարածաշրջանային տնտեսական տարածքում փոխկապակցվածությունների ցանցի միջոցով: Բացի այդ, տարբեր աղբյուրների տեխնոլոգիական գիտելիքների և կապերի բազմազանությունը հեշտացնում է մրցակցային առավելություններին հասնելու գործոնների համադրությունը և դառնում ցանկացած ինովացիայի նախապայման: Ուղղահայաց ինտեգրման հիման վրա դիվերսիֆիկացված կլաստերի մեջ միավորումը ստեղծում է տարատեսակ տեխնոլոգիական գյուտերի ոչ թե ինքնաբերիկ կենտրոնացում, այլ նոր գիտելիքների և տեխնոլոգիաների տարածման որոշակի համակարգ: Ընդ որում՝ գյուտերի՝ դեպի ինովացիա, իսկ ինովացիաներին՝ դեպի մրցակցային առավելություններ արդյունավետ տրանսֆորմացիայի կարևորագույն պայման է համարվում դիվերսիֆիկացված կլաստերի բոլոր մասնակիցների միջև կայուն գործընկերային կապերի ձևավորումը:

Դիվերսիֆիկացված կլաստերի առավելությունը նաև ընդգրկման ազդեցությունն է, որն առաջանում է, երբ կա արտադրության գործոն, որը կարող է միաժամանակ օգտագործվել մի քանի տեսակի ապրանքների արտադրության համար: Այս գործոնը բնութագրվում է իր բազմաֆունկցիոնալ բնույթով: Դիվերսիֆիկացված կլաստերներում ֆիրմաների խմբավորման դեպքում ընդգրկման ազդեցությունը նշանակալի կերպով ուժեղանում է, քանի որ առաջանում է հնարավորություն՝ օգտագործելու բազմաֆունկցիոնալ գործոնը տարբեր ձեռնարկություններում դրա փոխանցման հետ կապված գործարքի ծախսերը նվազագույնի հասցնելու դեպքում: Հարկ է նշել, որ նորամուծական կլաստերն իրենից ներկայացնում է ոչ միայն բիզնեսի ներկայացուցիչների, այլ նաև գիտական կազմակերպությունների, կրթական հաստատությունների, կառավարման մարմին-

¹ Հարությունյան Վ., Հարությունյան Դ., Տնտեսական քաղաքականության առաջնահերթությունները և վճարային հաշվեկշռի պետական կարգավորման բարելավման հեռանկարները. Մոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում (գիտ. հոդվ. ժողովածու – 2016) / ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան ՏԻ: Պատ. խմբագիր՝ Վ. Լ. Հարությունյան, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2016, էջ 131:


² Даллакян С. А., Инновационное развитие и конкурентоспособность экономики РА, Тенденции и перспективы развития. Ежегодник. Вып. 15, ч. 2 / РАН.ИНИОН. Отд. науч. Сотрудничества. Отв. ред. В. И. Герасимов. М., 2020. стр. 347.

ների, սպառողների ռեսուրսները և հիմնական կարողությունները միավորող ռազմավարական միջկազմակերպական ցանց: Նորամուծական կլաստերը՝ որպես սիներգետիկական համակարգ, ընդունակ է համակցել փոխլրացնող տարրերի և միավորվող սուբյեկտների ռեսուրսները և ապահովել տնտեսական արդյունքների աճ¹: Ըստ Գ. Վահանյանի կատարած վերլուծության՝ սիներգիզմի էֆեկտ կարող է ապահովվել ՌԴ ազգային ինտելեկտուալ կապիտալի հզորացման պարագայում՝ բարձրագույն կրթության, առևտրային կազմակերպությունների և ինովացիաների միջոցով: Մեզակլաստերների ձևավորման ու զարգացման արդյունավետ կառավարումը՝ ԵԱՏՄ երկրների ընդգրկմամբ, հնարավորություն կտա այն ապահովել կարճ ժամանակահատվածում: Վերջինիս համար անհրաժեշտ է ազգային ինտելեկտուալ կապիտալի հավասարակշռված աճ²:

Այս հետազոտության մեջ մենք վերլուծել ենք ՀՀ տնտեսության դիվերսիֆիկացման արդիականությունը և ներուժը, մի շարք համաթվերի և ցուցանիշների միջոցով փորձել ենք ներկայացնել ՀՀ ինովացիոն և գիտելիքահենք տնտեսության զարգացման հեռանկարները: Հիմք ընդունելով համաշխարհային նորարարական համաթվի երկու կշռադասված ենթահամաթվերը (innovation input, output), համաշխարհային գիտելիքի համաթվի 7 ցուցանիշները և համաշխարհային մրցունակության համաթվի 12-րդ ենթահամաթվի՝ ինովացիոն կատարողականի ցուցանիշները՝ իրականացրել ենք ՀՀ տնտեսության դիվերսիֆիկացման հնարավորության գնահատում գիտելիքի և ինովացիայի համատեքստում: Մշակել ենք սեփական մոտեցում՝ նպատակ ունենալով գնահատելու նոր տեխնոլոգիական իրականության մեջ ինովացիոն գաղափարի զարգացման արմատապես այլ ուղի: Ներկայացված բուրգում հստակ մշակված անհրաժեշտ և խթանող գործոնների ներագրմամբ ինովացիոն գաղափարը բուրգի առաջին մակարդակից բարձրանում է երկրորդ, որտեղ խթանող գործոններին միանում են ռեսուրսներ՝ մարդկային, կրթական (մինչհամալսարանական, արհեստագործական և բարձրագույն կրթությամբ), ֆինանսական, հեռահաղորդակցության տեխնոլոգիաներ և ենթակառուցվածքներ, որոնց շնորհիվ ինովացիոն արդյունքը հայտնում է բուրգի վերնի մակարդակում, որտեղ ստեղծագործական և հետազոտական արդյունքի վրա հիմնվելով ապահովում է գիտական արդյունքի առևտրայնացում (տե՛ս գծապատկեր 2):

¹ Портер М., Конкуренция / Пер. с англ., М., изд. дом «Вильямс», 2005. стр. 543.

² Vahanyan G. A., Vahanyan H., Ghazaryan M., (2018) "Interactive innovative tool for early diagnosis of global pre-crisis processes (based on measurement and assessment of the virtual intellectual capital)", Journal of Intellectual Capital, <https://doi.org/10.1108/JIC-05-2017-0074>, p. 204.



Գծապատկեր 2. *Ինվլացիոն գաղափարի շարժը ծնունդից մինչև առևտրայնացում*

Եզրակացություններ և առաջարկություններ

Այսպիսով՝ դիվերսիֆիկացիայի նշանակությունը մեծացել է ժամանակակից գլոբալ տնտեսական հարաբերությունների համակարգում: Ապրանքային շուկաների անկայունության և երկրների տնտեսությունների վրա այդ տատանումների ազդեցության պատճառով կարճ ժամանակահատվածում տնտեսական դիվերսիֆիկացման քաղաքականությունը դարձել է այդ բացասական հետևանքներից պաշտպանվելու ամենարդյունավետ միջոցներից մեկը: Միևնույն ժամանակ, տնտեսության մեջ հնարավոր երևույթների կանխատեսման դժվարությունը, երկրների կողմից տնտեսական հարաբերությունների՝ որպես քաղաքական գործիք հաճախակի օգտագործման միտումների աճը, տնտեսական դիվերսիֆիկացիայի կարևորության բարձրացումը ևս մեկ անգամ վկայում են այն մասին, որ այն տնտեսական զարգացման արդյունավետ ուղղություն է:

Տարածաշրջանային տնտեսության դիվերսիֆիկացման կառավարման մեթոդների, ձևերի և մեխանիզմների մշակման խնդիրներն ունեն արդիական հնչեղություն, քանի որ դրանց լուծման արդյունքում կբացահայտվեն տարածաշրջանային համակարգի մրցակցային առավելություններ և ռեսուրսների արդյունավետ օգտագործման հնարավորություններ: Այս համատեքստում խնդրի լուծման արդյունավետ ուղղություններից մեկը տարածաշրջանի տնտեսության առանձին բաղադրիչների կլաստերացումն է: Տարածաշրջանային տնտեսական համակարգերի դիվերսիֆիկացիան լուծում է տարածաշրջանի ոլորտային և տեղական շահութաբերության հավասարեցման, հանրային վերարտադրության անհամաչափության վերացման, անհրաժեշտ վերափոխման և դինամիկ կայունության

հասնելու խնդիրները: Դիվերսիֆիկացված կլաստերների առկայությունը տարածաշրջանային տնտեսությանը հնարավորություն են ընձեռում պահպանել իր առավելություններն այլ տարածաշրջանների նկատմամբ, որոնք ավելի հակված են նորացման և նորարարությունների: Դիվերսիֆիկացված կլաստերները հանդիսանում են խոշոր կապիտալ ներդրումների, իշխանությունների և հասարակության ուշադրության շարժառիթ, այսինքն՝ կլաստերը դառնում է ավելին, քան բիզնեսի առանձին արդյունքներ:

1. Ինովացիոն ինստիտուլիզացիա, բարենպաստ ինստիտուցիոնալ ինովացիոն միջավայրի ձևավորում՝ պաշտոնական և ոչ պաշտոնական ինովացիոն ինստիտուտների համակարգերի ստեղծման միջոցով:

2. Հաշվի առնելով կլաստերներից բխող սիներգիկ էֆեկտը՝ նորամուծական զարգացման տարածաշրջանային կառավարումը իրականացնել նորամուծական կլաստերների ձևավորման արդյունքում ստեղծված տարածքային նորամուծական համակարգի միջոցով:

3. Գիտությանը աջակցություն: ԳՀՓԿԱ և գիտական կազմակերպությունների աջակցության (առաջին հերթին ֆինանսավորման) համակարգի ձևավորում:

4. Ենթակառուցվածքային խտություն: «Խիտ» ինովացիոն ենթակառուցվածքի կառուցում, որը գործնականում կիրառում է իր բոլոր հնարավոր և արդյունավետ ձևերը:

5. Փոքր բիզնեսի զարգացում: Փոքր և միջին ինովացիոն և արդյունաբերական ձեռնարկության զարգացում:

6. Վենչուրային հատվածի զարգացում: Վենչուրային ֆինանսավորման և ձեռնարկատիրության զարգացում:

7. Համագործակցային բոլոր ձևերի զարգացում: Մասնավոր ընկերությունների և գիտական կազմակերպությունների, իշխանության, բիզնեսի և հասարակության միջև համագործակցության ապահովում և այլն:

8. Քաղաքական և տնտեսական կայունություն: Տարածաշրջանում քաղաքական և տնտեսական կայունության բարձրացում, որոնք որոշիչ են միջին ինովացիոն և արդյունաբերական ձեռնարկատիրության զարգացման գործում:

9. Գիտության և կրթության ինտեգրում: Կրթական և գիտական պրոֆիլի կազմակերպությունների ինտեգրում՝ մասնագետների պատրաստման մակարդակը բարձրացնելու նպատակով:

Օգտագործված գրականության ցանկ

1. Հարությունյան Վ., Հարությունյան Դ, Տնտեսական քաղաքականության առաջնահերթությունները և վճարային հաշվեկշռի պետական կարգավորման բարելավման հեռանկարները. Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում (գիտ. Հոդվածների ժողովածու – 2016) / ՀՀ ԳԱԱ Ս. Քոթանյանի անվան ՏԻ: Պատ. խմբագիր՝ Վ. Լ. Հարությունյան, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2016, 470 էջ: [Harowt'yownyan V., Harowt'yownyan D, Tntesakan qaghaqakanowt'yan ar'ajna-

- her'towt'yownnery' & vtwarayin hashvekshr'i petakan kargavorman barelavman her'ankarnery'. Social-tntesakan zargacman ardi himnaxndirneri' Hayastani Hanrapetowt'yownowm (git.hodv.jhoghovac'ow – 2016) / HH GAA M. Qot'anyani anv. TI: Pat. xmbagir` V.L.Harowt'yownyan. -Er.: HH GAA «Gitowt'yown» hrat., 2016, 470 e'j]
2. Սարգսյան Լ., Գրիգորյան Դ., «Տնտեսական հրաշքները». գործարկման ուղիները Հայաստանում (Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում - հատոր 1), գիտաժողովի նյութեր/ գիտ. խմբագիր` Վ. Լ. Հարությունյան, Եր., 2020, 480 էջ: [Sargsyan L., Grigoryan D., «Tntesakan hrashqneri'». gorc'arkman owghinery' Hayastanowm (Social-tntesakan zargacman ardi himnaxndirneri' Hayastani Hanrapetowt'yownowm-hator 1), gitajhoghovi nyowt'er/ git. xmbagir` V.L.Harowt'yownyan, Er., 2020t'. 480 e'j]
 3. Սարինյան Ռոբերտ, Տնտեսագիտական ուսմունքի պատմություն, Եր., «Ճարտարագետ» հրատ., 2004, էջ 85: [Sarinyan R'obert, Tntesagitakan owsmownqi patmowt'yown, Er., 2004, e'j 85]
 4. Վարդանյան Գ. Ի., Գիտելիքահենք տնտեսություն. հնարավորություններ և մարտահրավերներ, Եր., «Գիտություն» հրատ., 2008, 402 էջ: [Vardanyan G.I., Giteliqahenq tntesowt'yown. hnaravorowt'yownner & martahraverner – Er.: «Gitowt'yown» hrat., 2008 -402 e'j]
 5. Ваганян Г., Ваганян О., Россия: тенденции и перспективы развития. Ежегодник. Вып. 12, ч. 1 / РАН. ИНИОН. Отд. науч. Сотрудничества. Отв. ред. В. И. Герасимов. М., 2017, стр 534. [Vaganjan G., Vaganjan O., Rossija: tendencii i perspektivy razvitija. Ezhegodnik. Vyp. 12. Ch. 1 / RAN. INION. Otd. nauch. sotrudnichestva; Otv. red. V.I. Gerasimov. – М., 2017, str. 534]
 6. Гребенкин И. В., Влияние уровня диверсификации на инновационную активность в обрабатывающей промышленности // Экономика региона. — 2018, т. 14, вып. 2, с. 600–611. [Greibenkin I. V. Vlijanie urovnja diversifikacii na innovacionnuju aktivnost' v obrabatyvajushhej promyshlennosti // Jekonomika regiona. — 2018. — Т. 14. — Vyp. 2. — S. 600–611]
 7. Даллакян С. А., Инновационное развитие и конкурентоспособность экономики РА, Тенденции и перспективы развития. Ежегодник. Вып. 15, ч. 2 / РАН.ИНИОН. Отд. науч. Сотрудничества. Отв. ред. В. И. Герасимов. М., 2020, стр. 347. [Dallakjan S. A., Innovacionnoe razvitie i konkurentosposobnost' jekonomiki RA, Tendencii i perspektivy razvitija. Ezhegodnik. Vyp. 15. Ch. 2 / RAN.INION. Otd. nauch. sotrudnichestva; Otv. red. V.I. Gerasimov. М.: 2020. str 347]
 8. Институциональная экономика: Новая институциональная экономическая теория: Учебник. Коллектив авторов. Под ред. А. А. Аузана. 2-е изд. М., ИНФРА-М, 2011, стр. 139. [Institucional'naja jekonomika: Novaja institucional'naja jekonomicheskaja teorija: Uchebnik. Kollektiv avtorov. Pod red. A.A.Auzana.-2-e izd. М.:INFRA-М, 2011g. str. 139]

9. Портер М., Конкуренция / Пер. с англ. М., изд. дом «Вильямс», 2005, стр. 543. [Porter M. Konkurencija / Per. s angl. M.: Izd. dom «Vil'jams», 2005. str. 543]
10. Растворцева С. Н., Теоретические аспекты возможности ухода экономики региона от траектории предшествующего развития // Журнал экономической теории, 2018, т. 15, № 4. с. 633–642. [Rastvorceva S. N., Teoreticheskie aspekty vozmozhnosti uhoda jekonomiki regiona ot traektorii predshestvujushhego razvitija // Zhurnal jekonomicheskoy teorii, 2018, T. 15, # 4, s. 633–642]
11. Чарочкина Е. Ю., Каширцева А. Ю., Диверсификация промышленного комплекса региона (на материалах Курской области) // Известия Юго-Западного государственного университета. 2014. [Charochkina E. Ju., Kashirceva A. Ju. Diversifikacija promyshlennogo kompleksa regiona (na materialah Kurskoj oblasti) // Izvestija Jugo-Zapadnogo gosudarst-vennogo universiteta. 2014]
12. A Primer on the Knowledge Economy. Prepered by John Houghton and Peter Sheehan. CSES working Paper No.18, February 2000.
13. Asheim, B. T., Boschma, R. and Cooke, P. (2011). Constructing regional advantage: Platform policies based on related variety and differentiated knowledge bases. *Regional studies*, 45(7), 893–904.
14. Boschma, R. and Capone, G. (2015). Institutions and diversification: Related versus unrelated diversification in a varieties of capitalism framework. *Research Policy*, 44, 1902–1914
15. Drucker P. "The Age of Discontinuity", Heinemann, London, January 30 1992, p. 43.
16. Fagerberg, J. and Srholec, M. (2016). Explaining regional economic performance: the role of competitiveness, specialization and capabilities. *Papers in Innovation Studies*, CIRCLE. WP, 2, 29 p.
17. Feldman, M. and Audretsch, D. (1999). Innovation in Cities: Science-Based Diversity, Specialization and Localized Competition. *European Economic Review*, 43(2), 409–429.
18. Frenken, K., Van Oort, F. G., Verburg, T. (2007). Related variety, unrelated variety and regional economic growth. *Regional Studies*, 41(5), 685–697.
19. Hall, P.A., Soskice, D. (eds.): *Varieties of Capitalism. The Institutional Foundations of Comparative Advantage*. Oxford: Oxford University Press, 2001. An Introduction.
20. Neffke, F., Henning, M. and Boschma, R. (2011). How do regions diversify over time? Industry relatedness and the development of new growth paths in regions. *Economic Geography*, 87(3), 237–265.
21. Schwab K. The Global Competitiveness Report 2018. Available at: <http://www3.weforum.org/docs/GCR2018/05FullReport/TheGlobalCompetitivenessReport2018.pdf> (accessed 1.04.2021), p 631-649
22. Soumitra Dutta, Bruno Lanvin, *Global innovation index 2018, Energizing the World with Innovation*, 11th edition, Available at: https://www.wipo.int/edocs/pubdocs/en/wipo_pub_gii_2018.pdf (accessed 1.04.2021)
23. Soumitra Dutta, Bruno Lanvin, *Global innovation index 2019 Energizing the World with Innovation*, 12th edition, Available at:

https://www.wipo.int/edocs/pubdocs/en/wipo_pub_gii_2019.pdf (accessed 1.04.2021)

24. Soumitra Dutta, Bruno Lanvin, Global innovation index 2020, Energizing the World with Innovation, 13th edition, Available at:

https://www.wipo.int/edocs/pubdocs/en/wipo_pub_gii_2020.pdf (accessed 1.04.2021)

25. Specialization and Localized Competition. European Economic Review, 43(2), 409–429.

26. Vahanyan G. A., Vahanyan H., Ghazaryan M., (2018) "Interactive innovative tool for early diagnosis of global pre-crisis processes (based on measurement and assessment of the virtual intellectual capital)", Journal of Intellectual Capital, <https://doi.org/10.1108/JIC-05-2017-0074>, p. 206.

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԴԻՎԵՐՍԻՖԻԿԱՑՄԱՆ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՆԵՐՈՒԺԸ ԳԻՏԵԼԻՔԻ ԵՎ ԻՆՈՎԱՑԻԱՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

ՍՎԵՏԼԱՆԱ ԱՐԿԱԴԻԻ ԴԱԼԼԱՔՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու

ՍԱՐԳԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ՍԱՐԳՍՅԱՆ

«ԱԿԲԱ Լիզինգ» ՎԿ ՓԲԸ փոխտնօրեն

Համառոտագիր: Տնտեսության դիվերսիֆիկացումը տնտեսական զարգացման գործընթացներին աջակցելու ամենաարդյունավետ ուղղություններից մեկն է: Հոդվածում ներկայացվել են ՀՀ տնտեսության դիվերսիֆիկացման հնարավորությունները գիտելիքահենք և ինովացիոն տնտեսության համատեքստում: Ներկայացրել ենք գրականության ակնարկ տնտեսության դիվերսիֆիկացման անհրաժեշտության և հիմնավորվածության, ինչպես նաև գիտելիքահենք տնտեսության վերաբերյալ: Տնտեսության դիվերսիֆիկացման հնարավորությունների բացահայտման տեսանկյունից դիտարկել ենք կառուցվածքային փոփոխությունների գործընթացների վրա ինստիտուտների ազդեցության ուսումնասիրության մեջ ներառված նշանակալից հասկացություններից կապիտալիզմի բազմազանության և այլ տեսություններ: ՀՀ գիտելիքի և ինովացիոն ներուժի գնահատման համար վերլուծության ենք ենթարկել Համաշխարհային գիտելիքի համաթիվ (ՀԳՀ), Համաշխարհային նորարարության համաթիվ (ՀՆՀ) և Համաշխարհային մրցունակության համաթվի (ՀՄՀ) 12-րդ ենթահամաթիվը՝ նորարարության կարողություններ (innovation capability): Վերլուծության արդյունքում պարզ է դարձել, որ ՀՀ-ն ՀՆՀ-ով 2020 թ. ԵՍՏՍ և տարածաշրջանային երկրների (Ադրբեջան, Վրաստան, Իրան, Թուրքիա) ցանկում առաջատար դիրք ունի՝ 61-րդ տեղ, և զիջում է միայն ՌԴ-ի և Թուրքիային: Իսկ ՀԳՀ-ով 84-րդ տեղում ենք, և պատճառն այն է, որ ՀԳՀ-ի կառուցվածքային տարրերից ամենավատ դիրքերում են գտնվում կրթությունը բնութագրող ցուցիչները: Հոդվածում շեշտադրում է կատարվել, որ նորամուծական գործունեության իրականացման կարևորագույն ուղղություններից մեկը կլաստերների ձևավորումն է, և դիվերսիֆիկացված կլաստերը ունի առավելություն ընդգրկման ազդեցություն, որն առաջանում է, երբ կա արտադրության գործոն, որը կարող է միաժամանակ օգտագործվել մի

քանի տեսակի ապրանքների արտադրության համար:

Հոդվածի նորույթը. վերլուծված համաթվերի և ենթահամաթվերի, ցուցանիշների հիման վրա գնահատվել են ՀՀ ինովացիոն իրավիճակը և ներուժը, որի հիման վրա մշակվել է սեփական մոտեցում՝ հիերարխիկ մոդել (գծապատկեր 2), ինչը ներկայացված է բուրգի տեսքով, որում ուղենշվում են նոր տեխնոլոգիական իրականության մեջ ինովացիոն գաղափարի շարժը՝ ծննդից մինչև առևտրայնացում: Բուրգում առանձնացված են 4 մակարդակներ՝ անհրաժեշտ գործոններ և պայմաններ, ռեսուրսների առկայություն, կատարողական արդյունք և առևտրայնացում, որին հետևելու դեպքում կապահովենք գիտություն-տնտեսություն կապը, ինչի հետևանքով էլ գեներացված նորարարական, գիտական, ինժեներական կարողություններն արդյունավետ կերպով կառևտրայնացվեն:

Հոդվածը եզրափակել ենք առաջարկներով, որոնք կապված են գիտելիքահենք և ինովացիոն տնտեսության կայացման, ինչպես նաև կլաստերների սիներգիկ ազդեցության հետ: Վերջիններս կապահովեն տարածաշրջանի ինովացիոն էկոհամակարգի զարգացում և հավասարակշռված տնտեսություն:

Բանալի բառեր՝ տնտեսության դիվերսիֆիկացիա, արտադրական և տեխնոլոգիական դիվերսիֆիկացման ինստիտուցիոնալ պայմաններ, կլաստեր, սիներգիա, գիտելիքահենք տնտեսություն, առևտրայնացում

АКТУАЛЬНОСТЬ И ПОТЕНЦИАЛ ДИВЕРСИФИКАЦИИ ЭКОНОМИКИ РА В КОНТЕКСТЕ ЗНАНИЙ И ИННОВАЦИЙ

СВЕТЛАНА АРКАДЬЕВНА ДАЛЛАКЯН

Кандидат экономических наук

САРГИС АРУТЮНОВИЧ САРГСЯН

Заместитель генерального директора ЗАО «АКБА ЛИЗИНГ»

Аннотация. Диверсификация экономики - одно из наиболее эффективных направлений поддержки в процессе экономического развития. В статье представлены возможности диверсификации экономики РА в контексте инновационной экономики, основанной на знаниях. Мы представили обзор литературы о необходимости и обоснованности диверсификации экономики, а также об экономике, основанной на знаниях. С точки зрения выявления возможностей экономической диверсификации, из значимых концепций, включенных в исследовании влияния институтов на процессы структурных изменений, мы рассмотрели разнообразия капитализма и другие теории. В целях оценки знаний и инновационного потенциала РА, мы проанализировали 12-ый субиндекс Глобального индекса знаний (ГИЗ), Глобального инновационного индекса (ГИИ) и Индекса глобальной конкурентоспособности (ИГК) - инновационная способность (innovation capability). В результате анализа выяснилось, что в ГИИ в 2020 г. РА занимает лидирующие позиции в списке стран ЕАЭС и региональных стран (Азербайджан, Грузия, Иран,

Турция) - 61-е место, уступая только России и Турции. А в ГИЗ мы занимаем 84-е место, и причина в том, что показатели, характеризующие образование, находятся в худшем положении среди структурных элементов ГИЗ. Анализ также показывает, что в РА отсутствует связь наука-экономика, в результате чего и сгенерированные инновационные, научные и инженерные способности не коммерциализируются эффективно для того, чтобы войти в экономику, и в целях перспективного развития инновационной экономики РА, основанной на знаниях, надо, чтобы были сделаны заметные шаги именно по этой части. В статье подчеркивается, что одним из важнейших направлений к реализации инновационной деятельности является формирование кластеров. Диверсифицированный кластер обладает преимуществом эффекта охвата, которое возникает, когда существует фактор производства, который можно использовать для производства нескольких видов товаров одновременно.

Научная новизна: На основании проанализированных индексов, субиндексов и индикаторов была представлена инновационная ситуация в РА и ее потенциал, на основе которой был разработан собственный подход – иерархическая модель (рис. 2), которая представлена в виде пирамиды, направляющая к новой технологической реальности: движению инновационной идеи - от зарождения до коммерциализации. В пирамиде выделены 4 уровня: необходимые факторы и условия, наличие ресурсов, исполнительный результат и коммерциализация, при наблюдения чего мы обеспечим связь наука-экономика, в результате которой генерированные инновационные, научные, инженерные способности будут эффективно коммерциализированы.

Мы завершили статью предложениями, касающимися создания инновационной экономики, основанной на знаниях, а также синергетическим эффектам кластеров. Последние обеспечат развитие инновационной экосистемы региона и сбалансированную экономику.

Ключевые слова: экономическая диверсификация, производственная и технологическая диверсификация, институциональные условия, кластер, синергия, экономика основанная на знаниях, коммерциализация.

THE CURRENCY AND POTENTIAL OF RA ECONOMIC DIVERSIFICATION IN THE CONTEXT OF KNOWLEDGE AND INNOVATIONS

SVETLANA ARKADI DALLAKYAN

Ph.D. in Economics

SARGIS HARUTYUN SARGSYAN

Deputy General Manager «ACBA LEASING» co CJSC

Abstract. Economic diversification is one of the most effective ways to support the process of economic development. The article presents the opportunities of diversi-

fication of the RA economy in the context of knowledge-based and innovation economy. Hereby we have presented literature review on the necessity and validity of economic diversification, as well as on knowledge-based economy. From the point of view of revealing the opportunities for economic diversification, we have considered the diversity of capitalism and other theories among the significant concepts included in the study of the influence of institutions on the processes of structural change. To assess the science and innovation potential in RA, we have analyzed the 12th sub-index of Global Knowledge Index (GKI), the Global Innovation Index (GII) and Global Competitiveness Index (GCI) - innovation capability. As a result of the analysis, it became clear that in 2020 according to GII RA has a leading position in the list of EAEU countries and regional countries (Azerbaijan, Georgia, Iran, and Turkey) - it is in the 61st place yielding its positions only to Russia and Turkey. And according to GKI we take the 84th place and the reason for that is the fact that the indicators characterizing education take their worst positions among the structural elements of GKI. The article emphasizes that one of the most important ways to realize innovational activity is the formation of clusters. The diversified cluster has the advantage of coverage effect, which occurs when there is a factor of production that can be simultaneously used to produce several types of goods.

Novelty of the article: on the basis of the analyzed indexes and subindexes, indicators the innovation situation of RA and its potential has been evaluated, according to which a personal approach as to say a hierarchical model has been developed (Fig. 2), which is presented in the form of a pyramid, aiming to point out the new technological reality: the progress of innovation idea - from birth to commercialization. There are 4 levels in the pyramid: necessary factors and conditions, availability of resources, executive result and commercialization and in case of following that we will provide the science-economy connection, as a result of which the generated innovative, scientific, engineering capacities will be effectively commercialized.

We have concluded the article with some suggestions related to the establishment of a knowledge-based and innovation economy, as well as the synergistic effect of clusters. The latter will ensure the development of the region's innovative ecosystem and a balanced economy.

Keywords: economic diversification, production and technological diversification, institutional conditions, cluster, synergy, economics based on knowledge, commercialization